

ԿՅԱՆՔԻ ԵՎ ՄԱՀՎԱՆ ԻՄԱՅԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԵՆՐԻԿ ԷԴՈՅԱՆԻ ՊՈՆԶԻԱՅՈՒՄ

Փիլիսոփա-բանաստեղծի ծննդյան 80-ամյակի առթիվ*

Բանալի բառեր – բուդդիզմի փիլիսոփայություն, վերամարմնավորման տեսություն, կրոնափիլիսոփայություն, այլ աշխարհ, անմահություն, բանաստեղծություն, կյանք, մահ, մշակույթ, գրականություն, գիտակցություն, քառս, կոսմոս:

Մուտք

Մահվան առեղծվածը միշտ եղել և մնում է ինչպես գիտնականների¹ (մահագիտություն, տանատոլոգիա (հին հուն. θάνατος – «մահ», λόγος – «գիտություն»)²), այնպես էլ հանձարեղ ստեղծագործողների սևեռուն ուշադրության կենտրոնում, դարձել է նրանց մտորումների, ապրումների առարկան ու գրականության մեջ դրսևորվել այն ժամանակ, երբ ի հայտ է եկել ինքը՝ գրականությունը, և, պայմանավորված տվյալ ժողովրդի էթնոմշակութային առանձնահատկություններով, ընկալվել է որպես ողբերգական իրողություն կամ հակառակը:

Հնագույն ժամանակներից³ մինչև գիտատեխնիկական հզոր առաջընթացի դարաշրջանը նույն հարցն է հնչում.

* Հոդվածն ընդունվել է տպագրության 12.09.2020:

1 Գրականությունը տանատոլոգիական տեղեկույթի հիմնական աղբյուրներից է: Հենվելով հեղինակային ներշնչանքի և բացահայտումների վրա՝ այն թույլ է տալիս լսել ու զգալ նախորդ սերունդների տանատոլոգիական փորձի արձագանքը, ծանոթանալ մահվան և այլ աշխարհի մասին պատկերացումներին: Գրականագիտական տանատոլոգիան միտված է բացահայտելու այդ արձագանքները, ձևակերպելու և տալու որոշակի բացատրություն՝ չամաչելով «եզրակացությունների անլիարժեքությունից», քանի որ այլ եզրակացություններ տանատոլոգիական գիտափորձում գոյություն չունեն: Այդպիսի գիտափորձերի հետ են կապված այնպիսի նշանակալից անուններ, ինչպիսիք են Մ. Բլանշոն, Մ. Բախտինը, Ֆ. Հոֆմանը, Յ. Լոտմանը, Վ. Տոպորովը և ուրիշներ (տես **Красильников Р. Л.**, Танатологические мотивы в художественной литературе (автореферат диссертации на соискание ученой степени доктора филологических наук), М., 2011, էջ 4):

2 Տես «Большая российская энциклопедия», https://bigenc.ru/religious_studies/text/4181536 (մուտք՝ 27.10.2019):

3 «Ո՞ր ենք մենք գնում, ախ, ո՞ր ենք գնում, // Մենք այնտեղ մեռա՞ծ ենք, թե՞ դեռ ապրում ենք, // Շարունակվո՞ւմ է արդյոք գոյություն այնտեղ, // Մշտառկա վայելք կյանք Պարզևողի...» (թարգմանությունը ռուսերենից մերն է - Հ. Ջ.). նույն հարցն է հուզում նաև ժամանակակից մարդուն: Բերված օրինակը ացտեկական հնագույն պոեմից մնացած մի հատված է, որը, ըստ մեքսիկացի լեզվաբան, նաուգայի փիլիսոփայության հետազոտող Միգել Լեոն-

**Ի՞նչ է մահը,- գիտակցության
անկո՛ւմ թե ինչ և կամ՝ ոչինչ:
Ինչպե՞ս ոչինչ – մինչդեռ միայն
ոչինչն է, որ իրական է,
միակը, որ տրվում է քեզ:
(«Ոչինչ»)⁴**

Կյանքի և մահվան փիլիսոփայության էդոյանական մոտեցումները չեն սահմանափակվում նախնիներից ժառանգված գենետիկական ծրագրով, այլ երբեմն դուրս են գալիս էթնոմշակութային գիտակցության սահմաններից և ընդգրկում նաև կրոնական գիտակցության այլ ոլորտներ, մասնավորապես՝ արևելյան կրոնական փիլիսոփայությունները: Ինչ վերաբերում է տարբեր կրոններում կյանքի ու մահվան մասին պատկերացումների տարբերություններին, ապա **Հ. Էդոյանն այս պարագայում չի առաջադրում համընդհանուր-միացյալ կրիտերիում**, այլ ելնում է տարբեր կրոններում կյանքի և մահվան, երկու՝ «վերևի» և «ներքևի»՝ անտեսանելի և տեսանելի աշխարհների ընկալումների դրսևորման առանձնահատկություններից:

1. Կյանքը որպես «վերևի» և «ներքևի»՝ աննյութական և նյութական աշխարհների փոխկապակցված-փոխհարաբերված համակարգ

Երկու աշխարհները՝ տեսանելի աշխարհն ու անտեսանելի աշխարհը, որոնք տարաբևեռ են ու խիստ տարբեր, այնուամենայնիվ, սահմանակցվում են, որոնց հպումը բազում հարցերի տեղիք է տալիս. սահմանը, որը բաժանում է դրանց, նաև դրանց միավորողն է, և այստեղ, ինչպես մետաֆիզիկայի այլ հարցերում, պատասխանը ինքներս մեզ ճանաչելու մեջ է: Մեր սեփական հոգու կյանքն այդ երկու աշխարհների հպման սահմանի մասին դատելու հենակետ է ապահովում. տեսանելի կյանքին հաջորդում է անտեսանելի կյանքը, և դրանով է պայմանավորված այն, որ երբեմն լինում են թեկուզ կարճ, երբեմն՝ խիստ ձգված ժամանակներ, երբ երկու աշխարհները սահմանակցվում-հպվում-հաղորդակցվում են, և մենք զգում ենք դա. մեր ներսում տեսանելիի ծածկույթն ակնթարթորեն պատռվում է՝ ընդունելով անտեսանելին, այլաշխարհային եթերային շնչառությունը, այս աշխարհն ու այլ աշխարհը հալվում են մեկը մյուսի մեջ՝ կյանքը դարձնե-

⁴Պորտիլյայի, պահպանվում է «Մեքսիկական երգեր» հավաքածուում և գտնվում է Մեքսիկայի ազգային գրադարանի արխիվում (առավել մանրամասն տես *Леон-Портилья М., Философия Нагуа, М., 1961, էջ 227, 229*):
4 **Էդոյան Հ.**, Ընտրանի, Եր., «Հայագիտակ» հրատ., 2016, էջ 477:

լով համատարած հոսանքների աշխարհ⁵: Ներդաշնակվում են երկու հարթությունները՝ երկրայինն ու վերերկրայինը, ներթափանցում միմյանց մեջ՝ համաձայն տիեզերքի գլխավոր օրենքի. «Ինչպես որ վերևում է, այնպես էլ պիտի լինի ներքևում»⁶: Այդ օրենքի համաձայն է, որ տարվում են զուգահեռներ սեփական անձի և տիեզերական գիտակցության միջև. «Մարդու տառապանքը կապված է Աստծու տառապանքի հետ. ներքևինը (մարդը) իր մեջ կրկնում է Վերևին (Աստծուն). դա Աստծուն հաշտեցնում է մարդու հետ՝ նրան տալով վերադարձի հնարավորություն»⁷, - նկատում է Հ. Էդոյանը:

**Երկու աշխարհներ –
վերևն ու ներքևը,
և նրանց միջև՝ ուժը բացարձակ⁸:**

«Ինչպես տեսնում եք, հանդիպման վայրը խիստ առանձնահատուկ է. այն ո՛չ Երկնքում է, ո՛չ Երկրում, այլ, ասես, այդ երկուսը կապող ճանապարհի միջնամասում, այնտեղ, որտեղ մարդն իմաստավորում է իր գոյությունը... Կյանքի օրացույցում մի օր բացակայում է: ...Դա Աստծո և Մարդու հանդիպման օրն է»⁹:

Որոշակի եզրերով Հ. Էդոյանի պոետական խոհը ամնչվում է Դ. Անհաղթի փիլիսոփայական աշխարհայացքին, որին, սակայն, մոտենում է իր ճանապարհով, որն էպես և՛ տարբեր է անհաղթյան փիլիսոփայությունից, և՛ հարազատ: Հենրիկ Էդոյանը, ինչպես և Դավիթ Անհաղթը, կյանքի հիմնախնդիրը լուծում է՝ փորձելով կեցությանը վերագրել էականը, կատարյալը, անանցը, բացարձակը, որի լինելիության պայմաններում մահը ձեռք է բերում նոր նշանակություն: Նրա՝ մահվան հանդեպ տածած անխռովությունը սկիզբ է առնում հոգու անմահության գաղափարն ընդունելուց (ինչը ենթադրաբար գալիս է Դավիթ Անհաղթից, որին այս պարագայում կարելի է համարել Պլատոնի¹⁰ հետևորդը)¹¹, ինչի պատճառով երկրային իրականությունը ձեռք է բերում նոր որակ:

5 Տե՛ս Փլоренский П., Иконостас, С.-П., Изд. «МИФРАЛ», Русская книга, 1993, էջ 3-4:

6 Աստուածաշունչ (Հին Եւ Նոր կտակարանաց) (Եբրայական եւ յունական բնագիրներէն թարգմանուած), Վիեննա, Ամերիկեան Աստուածաշունչի ընկերութիւն, 1929, Մատթ. ԺԸ: 18: Այսուհետ Աստվածաշնչից մեջբերումները կնշվեն տեքստում:

7 Էդոյան Հ., Քրիստոսի միջոց-կերպարը զրական մշակութային զարգացման մեջ, Էդոյան Հ., Շարժում դեպի հավասարակշռություն: Հոդվածներ, էսսեներ, Եր., «Սարգիս Խաչենց, ՓՐԻՆԹԻՆՖՈ» հրատ., 2009, էջ 26: Նույնը՝ «Գարուն», 2005, N 1, էջ 31:

8 Էդոյան Հ., Երեք օր առանց ժամանակի, Եր., «Վան Արյան» հրատ., 2005, էջ 8:

9 Հարությունյան Է. Ա., Մարդկային կեցության այլակերպումները, Եր., ԵՊՀ հրատ., 2018, էջ 59-60:

10 Ըստ Պլատոնի՝ «յուրաքանչյուր հոգի անմահ է: Չէ՞ որ հարաշարժն անմահ է: ...Եվ երբեք չի դադարում և՛ շարժվել, և՛ հանդիսանալ շարժման մեջ գտնվող ամեն ինչի սկզբնաղբյուրը» (Պլատոն, Փեդր, Պլատոն, Սօբ. սօս.: В 4 т., т. 2, М., Изд. «Мысль», 1993, с. 154):

11 Տե՛ս Պետրոսյան Ս. Ս., Մահվան և կյանքի իմաստի հիմնախնդիրը Դավիթ Անհաղթի փիլիսոփայության մեջ, «Քաներ Երևանի համալսարանի», Եր., 2000, N 3, էջ 34-44:

Երկրային իրականության վերագանցական, անանձնական էությունը Հ. Էդոյանը պատկերում է տիեզերական գործընթացների առաջնային էներգետիկական պոտենցիալի՝ մութ ու անձև Քաոսի (հին հուն. χάος – «դատարկ տարածություն»)՝ տեսքով: Դեռևս Հեսիոդոսը իր «Աստվածների ծագումը» ստեղծագործության մեջ գրում է, որ «Նախապես տիեզերքում քաոսը ծնվեց, անմիջապես հետո՝ // Լայնակուրծք Գեան»¹²:

Հ. Էդոյանը առավելագույնս է զգում տիեզերական էության նախաստեղծ վիճակն ու ծածկագրված հիմքը, դեպի գոյության խորքերը գնացող նրա գեներտիկ բազմաձյուղ արմատները, որոնք ձեռքում են ավանդական տրամաբանության տիրույթները, ներթափանցում անվերջություն, նախագոյության մութ տարածություն, «որտեղ բանաստեղծական խոսքը հատում է վիզուալ աշխարհի սահմանները՝ հաղորդակցվելու իրերի, «գաղտնի» տարածությանը»¹⁴:

**Քաոսը զգացմունքն է, ուր սահման չկա,
քաոսը շարժումն է հենց այնպես,
քաոսը սկիզբն է, առաջին ուժը,
հղի վիճակը կնոջ,
թռչունի սարսափը երկնքի առջև,
քաոսը թանաքի լուծումն է ջրի մեջ:
Քաոսը բառերի անկումն է շեշտակի,
նրանց մյուս կողմը, ուր բարձրանում է
խավարն ինչպես անտառ,
հակապատկերը մտքի և հոգու,
բայց տարածքը նրանց:**

(«Քաոսը մենք ենք, ես ու դու»)՝¹⁵

Բանաստեղծն այստեղ հենվում է հին հունական միֆական այն պատկերացման վրա, համաձայն որի՝ աշխարհն արարվել է քաոսից՝ բարձրագույն բանականության (դեմիուրգի) գործությամբ: Քաոսն ընկալվում է որպես սկզբնամատերիա, արարչական ամեն գոյի սկիզբ, նրա միակ և հավերժական էներգիայի աղբյուր. քաոսում կորսվում է ամեն ինչ, քաոսից վերածնվում, առանց քաոսի՝ տիեզերքն իմաստազրկվում է: Առանց բառերի՝ իրերն ու երևույթները արստրակո-քաոսային հասկացություններ են. բառերի «ուժով» դրանց

12 «Мифы народов мира»: Энциклопедия. Электронное издание, Гл. ред. С. А. Токарев, М., изд. «Советская Энциклопедия», 2008, с. 1045-1046.

13 Гесиод, Антология мировой философии: в 4 т., т. 1: Философия древности и средневековья, М., Изд. «Мысль», 1969, с. 265.

14 Մուսայեյան Հ., Պոեզիայի ներքին տարածությունը, Ստեփանակերտ, «Դիզակ պլյուս» հրատ., 2010, էջ 48:

15 Էդոյան Հ., Ընտրանի, էջ 181-182:

16 Տե՛ս «Мифы народов мира», էջ 751-752:

բազմապլան հատկանիշներն ընդհանրանում–հստակեցվում–կոնկրետանում են, բայց բառերից այն կողմ «բարձրանում է խավարն ինչպես անտառ»։ Բառերից այն կողմ՝ տեսանելի աշխարհի սահմաններից դուրս, կա ուրիշ մի աշխարհ ևս, սակայն այստեղ բանաստեղծը հարցը թողնում է բաց՝ բացթողման հարաձուն փիլիսոփայությունը թողնելով պոեզիան ներըմբռնող, կյանքի ճանաչողության/իմացականության ճանապարհը որոնող ընթերցողին։

Ը. Էդոյանի քնարերգության մեջ այլ աշխարհի թեման վերլուծելով կարելի է եզրակացնել, որ նուրբ աշխարհը նյութական աշխարհի արքետիպն է, որի կոորդինատների համակարգի հայելային անդրադարձումը՝ զույգությունը¹⁷, արտաքին աշխարհին մղում է բացարձակամետության։ Այլ աշխարհի թափանցիկ ոլորտների հետ սուբյեկտիվ առնչության գիտակցումը հանգեցնում է նրան, որ մարդկային բանականության լույսը կոչված է ցրելու արտաքին աշխարհի խավարը։ Այսպիսով՝ **Ը. Էդոյանի բանաստեղծական աշխարհում հավերժությունն օժտվում է «երկրային ժամանակը» ապրելու խորհրդով**։ Կյանքը, որը բացվում է մահից հետո, հանդես է գալիս որպես «օբյեկտիվ իրականության» շարունակություն։

**Ես այստեղ եմ և ինձ հետ՝ ճակատագիրն իմ,
ինչպես գիպսից հանված հետմահու դիմակ,
ինչպես գրքի վերջում մի հետգրություն
և կամ տելեֆաքս՝ հանկարծակի եկած
XXI դարի դաժան սարքերից:
Ես այստեղ եմ, և ոչ ոք չի կարող ժխտել
այն, ինչ եղել է կամ ինչ կլինի:
Անցյալի փողերն են հնչում ականջիս
և ծանոթ մարդիկ են ինձ ձեռքով անում
Դրախտի ճանապարհից:**

(«Այստեղ և այնտեղ»)¹⁸

Դրախտը բանաստեղծական տվյալ պատկերում ոչ միայն մետաֆիզիկական տարածությունում է, այլ նաև ֆիզիկական. այն հանդես է գալիս որպես տարածական և հոգևոր կոորդինատների համակարգ, որը շաղկապում է երկինքն ու երկիրը, այստեղն ու այնտեղը, ներառում ներկայի և անցյալի, վերջի և սկզբի տարաբևեռ վեկտորները։ Մահը գոյության մի ձևի ավարտ է, միաժամանակ՝ գոյության մյուս՝ էգոյի սահմաններից դուրս նյութագուրկ ձևի սկիզբ, որը վերագանցական տարածությունում է և չի չափվում երկրային

17 Չույգություն–մասնիկ կամ մասնիկների համակարգի ալիքային ֆունկցիայի փոխակերպման հատկությունը կոորդինատների համակարգի հայելային անդրադարձման ($x \rightarrow -x, y \rightarrow -y, z \rightarrow -z$) դեպքում։ Այս հատկությունը հաճախ անվանում են նաև տարածական զույգություն (տես «Հայկական սովետական հանրագիտարան», հատ. 3, Եր., 1977, էջ 716)։

18 Էդոյան Ը., Ընտրանի, էջ 477-478։

Ժամանակով: Ուստի մահը, ստանալով գոյի նախասկզբի (սուբստանցիայի) իմաստաբանական կարգավիճակ, բանաստեղծի պոետական աշխարհում պատկերվում է պարադոքսների և փոխաբերությունների միջոցով: «Անցյալի փողերն են հնչում ականջիս» պատկերը տանում է դեպի **Հայտնության գիրքը**, որում որպես ապոկալիպսիսի նախանշան հանդես է գալիս երկնքից հնչող յոթ փողերի փողհարումը¹⁹: Սակայն այս պարագայում ապոկալիպսիսը չի գործածվում համընդհանուր իմաստով, այլ անհատական, ներանձնային. ամեն վախճան, ըստ էության, աշխարհի վերջ է²⁰: «Վերջին օրը» մարդը հոգևոր դատաստանի²¹ առջև ներկայանում է Բարձրյալի սցենարով գրված, սակայն գործողությունների «կերպավորման» ու «ինպրովիզացիայի» իրավունքն իրեն վերապահած «կինոֆիլմով», և «ճիշտ խաղացած դերով» պայմանավորված կլինի իր հետագա ճակատագիրը: Այս պարագայում վճիռն ակնհայտ է (...և ծանոթ մարդիկ են ինձ ձեռքով անում // Դրախտի ճանապարհից)²²: (Սև գիշերն անցնում է, ես նրանից դուրս եմ, // ես նրա մեջ եմ այստեղ և այնտեղ, // իսկ ինչ մնում է երկուսի միջև, // այդ ես չեմ, այլ միայն ճակատագիրն իմ, // իմ դիմակն հետմահու...):

«Ճակատագիրը որպես հետմահու դիմակ» (հետմահու դիմակի իմաստը տարածվում է ճակատագրի վրա) համեմատությունը տանում է դեպի **արևելյան մշակույթ**: Այս կերպ բանաստեղծության մեջ կեցության կարևորագույն տարրը կազմող ճակատագրի մասին լիրիկական «ես»-ի պատկերացումներով ձևավորվում է հայացքների՝ պատկերացումների այնպիսի համակարգ, որի մեջ բացահայտվում է քրիստոնեական և արևելյան կրոնական ավանդույթների յուրօրինակ երկխոսությունը: Տեսանելի է հինդուիստական կրոնների ու փիլիսոփայությունների գլխավոր հասկացությունը՝ կարման²³,

19 Ըստ համաշխարհային որոշ կրոնների՝ աշխարհի վերջն ազդարարվելու է երկնքից հնչող հնչյուն-որոտյուններով: Օրինակ՝ համաձայն քրիստոնեական հավատալիքի Աստծո հրեշտակները յոթ փող են փչելու՝ ազդարարելու նյութական աշխարհում ինքնիշխան լինելիության վերջին օրը, իսկ ըստ իսլամի մուրոթակի վերջին օրերը «ավետաձայնվելու» են երկնքից եկող՝ փողի ձայներ հիշեցնող դրոշյունով (տես **Коран**, Перевод и комментарии М.-Н. О. Османова, М., 1995, сурա 54:1-55):

20 «Ուրիշի մահը իմ մահն է, ոչ միայն իմ մահն է, այլ նաև ողջ մարդկության և նույնիսկ ողջ տիեզերքի, այն էսխատոլոգիական աղետ է,- եզրակացնում է ռուս փիլիսոփա և գրաքննադատ Վ. Ն. Իլյինը (**Ильин В. Н.**, Эссе о русской культуре, В. Н. Ильин СПб, «Акрополь», 1997, с. 254):

21 Ըստ Աստվածաշնչի դատաստանը լինելու է ոչ միայն հոգևոր, այլ նաև մարմնավոր, քանի որ մարմինը Սուրբ հոգու տաճարն է (Ա Կորնթ. Զ: 19): Պողոս առաքյալի՝ հռոմեացիներին ուղղված թղթում կարդում ենք. «Եթե ձեր մեջ բնակվում է Աստծո հոգին, Աստված, Ով հարություն տվեց Հիսուս Քրիստոսին մեռելներից, ապա և Իր հոգու միջոցով, կկենդանացնի ձեր մահկանացու մարմինները, ձեր մեջ բնակվող Իր Հոգով» (Հռովմ. Ը: 11): Առաքյալը վկայում է, որ «ամեն ալ Քրիստոսի ատեանին առջև ներկայանանք, որպես զի ամեն մեկը իր մարմնովը ըրածներուն փոխարենը առնէ ինչ որ գործեր է, թէ՛ բարի և թէ՛ չար» (Բ Կորնթ. Ե: 10): Տես նաև Յովի. Ա: 1, Ա Կորնթ. ԺԵ: 35-50, Հռովմ. Ը: 23, Հռովմ. Ը: 18-24:

22 Ռուսական սիմվոլիզմի ապոկալիպսիսային ուղղվածությունը կապված է Վ. Սոլովյովի էսխատոլոգիայի հետ (տես **Соловьев В. С.**, Три разговора, **Соловьев В. С.**, Собрание сочинений в 10 т., т. 10, СПб., 1897-1900, էջ 81-221): Ապոկալիպսիսի և տեղի դատաստանի զգացողությամբ ռուսական սիմվոլիզմը տարբերվում է եվրոպականից, որը չէր հետևում որևէ էսխատոլոգիայի (հեղինակն ասվածը հիմնավորում է Ֆրանսիացի սիմվոլիստներ Պ. Վեռլենի և Ս. Մալարմեի օրինակներով): Չարենցի վաղ շրջանի «Աթիլա», «Սոմա», «Ամբոխները խելագարված» պոեմների սիմվոլիզմը, որոնց հատուկ է ապոկալիպսիսային-էսխատոլոգիական հագեցվածությունը, մոտ է ռուսական սիմվոլիզմին: Այս մասին առավել մանրամասն տես **Էդդան Հ.**, Եղիշե Չարենցի պոետիկան (երկրորդ հրատարակություն), Եր., «Վան Արյան» հրատ., 2011, էջ 108-109:

23 Վարմայի մասին տես Буддизм: Словарь (**Абаева Л. Л.**, **Андросов В. П.**, **Бакаева Э. П.** и др.), Под общ. ред. **Жуковской И. Л.** и др., М., Изд. «Республика», 1992, էջ 144-146:

ըստ որի՝ հոգու հերթական վերամարմնավորման²⁴ մակարդակը՝ ճակատագիրը, կանխորոշվում է սեփական արարքներով: Ցանկացած արարք ստեղծում է կարմա, և մարդը հաջորդ մարմնավորման ժամանակ «քաղում» է նախորդ կյանքերում «ցանածի» պտուղները²⁵: Այսպիսով՝ բանաստեղծության կոմպոզիցիոն կառուցվածքում ձևավորվում է այն գաղափարը, որ ճակատագիրը հնարավոր է շտկել: Կարելի է ասել, որ բանաստեղծության ամբողջ իմաստը խտացված է հետևյալ պատկերում. «Սև գիշերն անցնում է, ես նրանից դուրս եմ, // ես նրա մեջ եմ-այստեղ և այնտեղ....»: Գիշերն²⁶ այստեղ ընկալվում է որպես անթրոպոկոսմիկական²⁷ ֆենոմեն: Գիշերն ամենաստեղծ ուժն է. այն իր մեջ խտացնում է ծնունդն ու մահը, մարդու և բնության վերածնման անվերջ շրջապտույտը²⁸, միևնույն ժամանակ այն

24 Ավանդաբար հոգու վերամարմնավորման գաղափարն ընդունված է համարել արևելյան հավատալիքների ավանդույթ, մասնավորապես՝ հինդուիստական ու բուդդիստական կրոնափիլիսոփայական ուսմունքների: Չնայած նրա ճշմարտացիությունը դեռևս գիտականորեն ապացուցված չէ, բեկ այդ մասին մտորում էին դեռևս Պլատոնի ժամանակներից, այնուամենայնիվ, հոգեբանական գիտությունները (ի դեմս է. Բուրարկի, Կ. Գ. Յունգի և այլոց) «Չեթն-սս»-ի ֆենոմենի ամնչությամբ որոշակի համոզիչ եզրահանգումներ ունեն: Ուշադրության են արժանի հատկապես բժշկական և հոգեբանական գիտությունների, այսպես կոչված, «նախավախճանային» իրավիճակների դիտարկումները, մասնավորապես՝ Ռայմոնդ Մոուդի (*Рэймонд Мууди, Жизнь после жизни: Свет вдали, С., Изд. «София», 2009*), Ստանիսլավ Գրոֆի (*Станислав Гроф, Джоан Хэллфакс, Человек перед лицом смерти (пер. с англ. А. И. Неклесса), М., Изд. Трансперсонального Института, 1996*), էլիզաբեթ Քյոբլեր-Ռոսսի (*Кюблер-Росс Элизабет, О смерти и умирании, С., Изд. «София», 2001*), Նատալյա Բեխտերայի (*Наталья Петровна Бехтерева, Магия мозга и лабиринты жизни, СПб., изд. «Нотабене», 1999*), Ալեքսիս Կարրելի և այլոց հետազոտությունները, որոնք հանգել են ոչ նյութական աշխարհի գոյության ճշմարտացիությանը՝ չնայած նրան, որ այդ եզրակացությունները դեռևս որոշ հետազոտողների համար մնում են վիճարկելի:

25 Վերոնշյալի լավագույն ապացույցը Բուդդայի ու նրա աշակերտների վերածնման պատմություններն են: Օրինակ՝ չնայած Բուդդան բացարձակապես ազատագրված էր կարմայից, նա մահացավ սննդային թունավորումից: Բուդդիստական ավանդույթի համաձայն՝ չնայած Բուդդան գիտեր ամեն ինչ, նաև այն, որ ինքը կմահանա անորակ սնունդ ընդունելու հետևանքով, այնուամենայնիվ, ձակատագրին կամ կարմային դեմ չի գնում. նրա վերջին կարմատիկ գործողությունը պետք է լիներ թունավորումը, որից հետո նա ազատագրվում է վերամարմնավորման «կարուսելից» ասմարայից, հասնում միրվանայի, ծովվում «համընդհանուր ոգուն» (առավել մանրամասն տես՝ Բուդդիզմ: Словарь (Абаева Л. Л., Андросов В. П., Бакаева Э. П. и др.), էջ 144-146):

26 Գիշերվա սիմվոլը ռոմանտիկական պոեզիայում առաջին հերթին տանում է դեպի իրականության իռացիոնալ («գիշերային») այլաշխարհային ոլորտ (այս մասին առավել մանրամասն տես՝ *Тихомирова Л. Н., «Ночная» поэзия в русской романтической традиции: генезис, онтология, поэтика. Диссертация на соискание ученой степени к. фил. наук, Екатеринбург, 2010*): Ցեղեկն ու գիշերը՝ որպես հնագույն սիմվոլներ, որոնք գոյություն ունեցող ամեն ինչի մետաֆիզիկական հիմքն են կազմում, կոսմոսի և քաոսի պրոյեկցիա են: Հյուդեյնիսի և Նովալիսի ստեղծագործական աշխարհների հերոսը այլաշխարհային ոլորտների ձամփորդն է: Կյանքի ռոմանտիկական իդեալը շարժումն է դեպի անսահմանություն: Առաջին հայացքից կարող է թվալ, թե Հ. էդդյանի տվյալ բանաստեղծության մեջ գիշերվա սիմվոլիկայի գործածումը տանում է դեպի ռոմանտիկական ավանդույթ: Սակայն Վ. Մ. Ժիր-մունսկու՝ ռոմանտիկական իդեալի մասին մեկնությունը ջնջում է այդ պատրանքը. «Եվ անցնում են երկրի վրայով ռոմանտիկ ուխտավորները, գալիս ոչ թե սեփական կամքով, այլ ուղարկված օտար ուժերով: Նրանք ոչ մի տեղ ոչ խաղաղություն ունեն, ոչ հանգիստ: Նրանք նախապես տեսիլքն է, որը հեռանում է, որպեսզի մոտենա, որովհետև չկա վերջնական գոհացում, և անսահմանությունը վերջ չունի: Երջանկությունը իր մոտ կանչող հավերժական հեռուն է» (*Жирмунский В. М., Немецкий романтизм и современная мистика, СПб, тип. т-ва А. С. Суворина «Новое Время», 1914, с. 61*): Գիշերը՝ որպես քաոսի սիմվոլ, տրանսցենդենտալի պատկերն է, որը չի կարող տեղավորվել մարդկային գիտակցության մեջ: Այստեղ գիտակցության օգնության են գալիս զգացմունքն ու սիրտը, բայց աշխարհն այս կերպ պառակտվում-բաժանվում է զգայականի ու գիտակցականի միջև, ինչը, ըստ ռոմանտիկների, մարդուն խանգարում է ճշմարտապես ընկալելու Բացարձակին: Որքան բնության օրենքներն ընկալելի են դառնում, այնքան ավելի շատ է այլաշխարհային ուրիների որոնման ռոմանտիկական երազանքը դառնում անիրաժեշտություն (գիշերվա սիմվոլի մասին առավել մանրամասն տես՝ *Левочкий С. С., Символ ночи в немецком романтизме, «Вестник московского университета», Серия 7. Философия, 2016, N 2, էջ 86-101, տես նաև *Левочкий С. С., Концептуализация символа ночи в философской культуре немецкого романтизма, Диссертация на соискание ученой степени к. филос. наук, М., 2017*):*

27 **Անթրոպոկոսմիզմ** - մարդու մասին փիլիսոփայական, բնագիտական և սոցիոլոգիական պատկերացումների սինթեզ, համաձայն որի՝ մարդը տիեզերքի օրգանական մաս է, որը ենթարկվում է նրա օրինաչափություններին և սահմանված կարգով ազդելով նրա զարգացման գործընթացի վրա: Առավել մանրամասն տես՝ *Кириленко Г. Г., Краткий философский словарь, М., Издательство АСТ, 2010, էջ 14*:

28 Ըստ Հեյդոլդսի Գիշերը «աստվածների մայրն» է: Խավարի ու Գիշերվա միությունից ծնվում են լույսը, Եթերն ու օրը, պայծառակերպ Հեմերան: Գիշերը ամենակարող աստվածուհին է, ով տարերքներ է ծնում ոչ միայն իր եղբայր-

կապվում է քառսի և քնի հետ: Վերջինս ընկալվում է որպես ժամանակավոր մահ: Քառսի մեջ կյանքն ու մահը միավորվում են, ինչի շնորհիվ քառսը «նոր կյանքի սկիզբ» իմաստն է ստանում²⁹: Լիրիկական «ես»-ն այս պարագայում երկրային տարածությունում է («ես այստեղ եմ, և ոչ ոք չի կարող ժխտել // այն, ինչ եղել է կամ ինչ կլինի»): Եթե գիշերը խորհրդանշում է մարդու և բնության վերածննան շրջապտույտը, իսկ լիրիկական «ես»-ը և՛ գիշերվա մեջ է, և՛ դրանից դուրս, նշանակում է նա ազատվում է կարմայից և պատրաստ է դուրս գալու անվերջ վերածնվելու շրջանից, ինչպես բուդդայականության մեջ ընդունված է ասել՝ սանսարայից, և հասնելու կատարելության՝ նիրվանայի, ինչը ենթադրում է, որ լիրիկական «ես»-ը հասնում է գիտակցության այլ մակարդակ, վերագանցում է ինքն իրեն (սա հոգու սահմանային այն բարձրագույն երանելի վիճակն է, երբ երկնային տարերքը ներթափանցում է նրա մեջ), «ազատագրվում» ինքն իրենից, դուրս գալիս երկրային գոյության՝ ֆիզիկական աշխարհի սահմաններից, մղվում դեպի հեռավոր եթերային աշխարհ, կարողանում լսել տիեզերքի ձայնը, բացահայտել աշխարհակառույցի նրբածածուկ օրենքներն ու ներկան դիտում անցյալի պրիզմայով: **Վերլուծել ներկան նշանակում է այժմեականության մեջ տեսնել մարդկային ճակատագրի մեկնությունը:**

2. Կյանքի և մահվան մասին պատկերացումները տարածաժամանակային ընկալման համատեքստում

Այսպիսով՝ կյանքի և մահվան իմացաբանական խնդիրները դառնում են Հ. Էդոյանի ստեղծագործական արարչագործության գլխավոր թեման՝ համաձուլելով անցյալը, ներկան ու ապագան: Նրա համար մահը, որը կրկնվում է կյանքից կյանք, հավերժության «երկվորյակն» է, և հնարավոր է ձեռք բերել միայն «օրերի գծերից դուրս»՝ գծային ժամանակի հաղթահարման միջոցով:

**Մինչև կանցնի հիշողության ժամը հին
(որն օրվա մեջ մի կղզի է թվում ինձ),
ես դուրս կգամ իմ օրերի գծերից,
կմոտենամ քո հեռավոր սահմանին:**

(«Սոնետների պսակ») ³⁰

ամուսնուց (նա ծնել է ոչ միայն լուսավայծառ Հեմերային, այլ նաև Մահվանը, Մոռացությանը, Պատերազմին, Սպանությանը և այլն), այլև ինքնուրույն ինքն իրենից Թանատոսին, Հիպնոսին, Նեմեսիդին և ուրիշների (տես **Лосев А. Ф.**, *Античная Ночь и социально-историческое сознание древних*, Acta Conventus XI «Eirene». Warszawa, 1971, էջ 355-366: Մեջբերումն ըստ **Козьякова М. И.**, *Город и ночь-хронотоп конфликта*, <https://cyberleninka.ru/article/n/gorod-i-noch-hronotop-konflikta-nachalo/pdf> (մուտք 08.04.2020)):
29 **Stuň Kуклев В.**, *Ночь*, «Энциклопедия символов, знаков, эмблем», сост. **В. Андреева** и др., М., изд. «Локид», 1999, էջ 346-348:
30 **Էդոյան Հ.**, Ընտրանի, էջ 50:

Այստեղ տեղին ու ժամանակին է վերհիշել հոգեբանական նույն խորությամբ, նույն երանգներով մարմին առած չարենցյան բանաստեղծական տողերը, որոնք մետաբանաստեղծական կառուցվածքում ունեն ընդհանուր մթնոլորտ՝ լայնածիր երևակայական այուժեի միջոցով արտացոլել կեցության ու տիեզերական ժամանակի առեղծվածները, այն, որ հոգին միակցում է մարդու ներաշխարհը տիեզերքի անվերջությանը.

**Հոգին չի մեռնում: Մարմինը թողած երկրային փոսում-
Թափառում է նա տիեզերական Լաբիրինթոսում:
Անցնում է բոլոր ճամփաները սուտ ու անբեր երկրի,-
Որ պայծառ, մաքուր դարձերից հետո,- Քո գրկում բերրի,-
Քայքայ Ե՛րբ կհասնի հոգիս, որպես սեզ, սրբացած մի զոհ,-
Մայրամուտային եզերքը Կապույտ,- լույս եզերքը Քո...³¹**

Անցումը գծային ժամանակից այն կողմ բնորոշվում է որպես բանաստեղծական սուբյեկտի ֆիզիկական սուբստանցիայի մետաֆիզիկական «տեղափոխում» դեպի այլ՝ տրանսցենդենտալ իրականություն: Այս ամենի հետ պետք է նկատել նաև, որ մարդկային հոգու միստիկական և տիեզերական հավերժության թեման Ե. Չարենցի պոեզիայում ընկալվում են սիմվոլիստական ավանդույթի լույսի ներքո՝ որպես մարդկային տրանսդրությունները, իրականության տարաշերտ էությունը բազմապլան ներկայացնելու պայման՝ դառնալով միստիկականի, խորհրդավորի, աշխարհի տրանսցենդենտալ սկզբի իմաստային էկվիվալենտը: Իսկ «Էդոյանի համարյա բոլոր բանաստեղծությունների փիլիսոփայական հենքը տիեզերական տարածության և ժամանակի անսահմանության հայտնի գաղափարն է»³²: Նա խորամուխ է լինում տիեզերական տարածությունն ու երկրային տարածությունը մերձեցնելու, մեկը մյուսով լիցքավորելու և զորացնելու, միմյանց մեջ փոխներթափանցելու, ինչի վառ ապացույցը «Էլեգիկ մտորումներն են», որոնցում քրիստոնեական խորհրդանիշների ու գաղափարների բարեշրջության բանաստեղծական մոտեցումները սկզբնավորվում են քրիստոնեական պատկերներում և իրենց էվոլյուցիան վերջնավորում դիցաբանական տարբեր այուժենների ու մոտիվների հեղինակային ընկալումներով և Ռ. Մ. Ռիլկեի աշխարհայեցողության ընկալման այն տեսակետներով, որոնց հիմքում մարդկային էության բացահայտումն է, նրա դերը երկրի վրա: Բարձրագույն «ինստանցիան», որի հետ հարաբերակցվում-համեմատվում է Ռ. Մ. Ռիլկեի քնարական հերոսը, հրեշտակն է, որը, կարելի է ասել, տվյալ պարագայում փիլիսոփայական կա-

31 **Չարենց Ե.**, Երկերի ժողովածու չորս հատորից, հատոր առաջին. բանաստեղծություններ և պոեմներ, Եր., «Սովետ. գրող» հրատ., 1986, էջ 45:

32 **Ավետիսյան Զ.**, Գեղարվեստական մտածողության հետքերով, Եր., «Սովետական գրող» հրատ., 1985, էջ 154:

տեգորիա է և չի համապատասխանում հրեշտակների մասին կրոնական պատկերացումներին³³:

**....Մեկը վերևից
գնում է լռությամբ
նրան, ով ապրում է, լավ չհասկանալով՝
թե ինչ է անում: Ապրել՝ չհասկանալով, չապրել՝
հասկանալով, ո՞վ է գնում նրան,
որպեսզի նրա մեջ տեսնի ինքն իրեն....³⁴**

Երկու աշխարհների՝ կյանքի և մահվան միջակայքում «տեղակայված» թագավորությունում անգամ հրեշտակներն են գլխապտույտ ունենում «չհասկանալով» իրենց գոյության նախապատմությունը՝ «իրենք ապրողների միջոցով են գնում, թե՞ մեռյալների»³⁵: Բանաստեղծության այս հատվածի գաղափարական հենքը Ռ. Մ. Ռիլկեի «Դուրիսյան էլեգիաներ» փիլիսոփայական շարքի գաղափարաբանությունն է, որը կառուցված է պոստմոդեռնիստական արվեստին հատուկ եղանակով՝ երկու տեքստերի «երկխոսությամբ» (ինտերտեքստ)³⁶: Հրեշտակն այն էությունն է, որի լույսի ներքո Ռ. Մ. Ռիլկեն փորձում է հասկանալ մարդկային հոգևոր էության հնարավորությունները: Հրեշտակները հոգևոր էակներ են, որոնք գտնվում են Աստծո և մարդու միջև: Նրանք ուժեղ են, ամենակարող ու մարդկանց նման ունեն ազատ կամք (Մատթ. ԻԵ: 41), սակայն ինչպես մարդիկ, նրանք նույնպես դեռևս անմահ չեն: Ռ. Մ. Ռիլկեի քնարական հերոսը փորձում է ինքն իր մեջ ամփոփված հրեշտակի մեջ մարդկային հատկանիշներ հայտնաբերել: Նա փորձում է ինքն իրեն ու հրեշտակին ապացուցել-հավատացնել նյութական աշխարհի կարևորությունն ու կատարելությունը, հրեշտակին ցույց տալ, որ նա, ի հակադրություն մարդկանց, ապրում է դատարկ և անօգուտ աշխարհում. մարդն արարիչ է, իսկ հրեշտակները ոչինչ չեն կարող ստեղծել: Հրեշտակը փորձում է հասկանալ մարդկային ցավը, ինչն անհնար է, քանի որ նրան օտար են տառապանքները. նա կարող է ընդամենը կրկնօրինակել մարդուն իր տառապանքի մեջ: Շարքի վերջում հրեշտակի ու քնարական «ես»-ի էությունները հավասարվում-նույնանում են³⁷:

Էդոյանի պոետական աշխարհում ժամանակն ու հավերժությունը ուղղակիորեն չեն ընկալվում. այն կրում է գոյի խորհուրդը և հանդես է գալիս որպես գլխավոր թեմա, հայեցակարգ, որն իր մեջ ամփոփում է Աստծո,

33 Տե՛ս Карельский А. В., О Рильке, Rilke R. M. Gedichte, М., Изд. «Прогресс», 1981, էջ 27, Воробей И. А., «Бог» и «Ангел» в поэзии Р. М. Рилке, Пятигорск, ПГУЛ, 2007, էջ 86:

34 Էդոյան Հ., Էլեգիկ մտորումներ, Եր., «Վան Արյան» հրատ., 2019, էջ 9:

35 Նույն տեղում, էջ 58:

36 Տերմինն առաջինը գործածել է Յուլյա Կրիստևան, ով, սակայն, նշում է, որ տերմինի հեղինակը Մ. Մ. Բախտինն է: Ավելի մանրամասն տե՛ս Кристева Ю., Бахтин, слово, диалог и роман, Диалог. Карнавал. Хронотоп, 1993, N 4, էջ 5-24:

37 Տե՛ս Воробей И. А., նշվ. աշխ., էջ 90-99:

հավիտենության, կյանքի և մահվան թեմաներ: «Հ. Էդոյանի պոեզիայում ժամանակը (կյանքը) պահ է, տիեզերալույսի (հիշողություն) երկրին առաջնաձգված կետ,- գրում է Հակոբ Հարությունը:- Ժամանակի տևականությունը այդ կետերի շարք է, այսինքն՝ գիծ-հոգու ընթացք, ինչն էլ օրվա գծերը իմաստավորող բանաստեղծի գոյաշարժն է, որով սկսվում է տարածական անսահմանությունը, ո՛չ, ո՛չ, որով անցնում է. գիծը կողմեր չունի»³⁸:

Մարդու հոգևոր կյանքը բանաստեղծի համար տարածաժամանակային հաջորդականության համակարգ է, որը տեղակայվում է օբյեկտիվ գոյության միջակայքում և հպատակվում տիեզերական ուժերին, որոնց համար մարմինը կշիռ չունի.

**Նրա մարմինը
մետաղից ամուր էր և ծանր նրանից
Իսկ հոգին թեթև էր ավելին քան մահը:**

**Հրեշտակները շփոթվել էին
երբ նրան կշռում էին
Որովհետև նա
դժոխքից ծանր էր դրախտից թեթև:**

**Երկինքն ու երկիրը նույն գծի վրա
և նույն մարմնի մեջ:**

(«Թեթև և ծանր»)³⁹

Այսպիսով՝ հոգին գտնվում է երկակի գոյության սահմանին, և «Երկինքն ու երկիրը հայտնվում են նույն գծի վրա և նույն մարմնի մեջ»: Նկատելի է, որ «հրեշտակ» բառույթը ինչպես Ռ. Մ. Ռիլկեի, այնպես էլ Հ. Էդոյանի բանաստեղծական աշխարհի գլխավոր հասկացություններից է, որը տարբեր բանաստեղծություններում դրսևորվում է իր տարաբնույթ որակներով: Այս պարագայում հրեշտակը՝ կյանքի և մահվան միջակայքում՝ տարածաժամանակային հատույթում «տեղակայված» աշխարհի մշտաբնակիչը, «ներկայանում» է որպես ապոկալիպտիկ նախակերպար, իսկ կշեռքը նրա ստրիբուտն է՝ արդարության հնագույն խորհրդանիշը, որի միջոցով նույնանում է արդարության ու օրինականության հին հունական աստվածուհուն՝ Ֆեմիդային⁴⁰:

38 Հարություն Հ., Գծի խորհուրդը Հենրիկ Էդոյանի պոեզիայում, «Գրական թերթ», Եր., 2017, N 20, էջ 7-8:
39 Էդոյան Հ., Ունտրանի, էջ 622:

40 Ֆեմիդա կամ Թեմիդա, Թեմիս (հուն. Θέμις): Մանրամասն տես «Мифы народов мира», էջ 1026:

Տարածությունն ու ժամանակն օժտված են ընդհանուր հատկություններով և համապատասխանաբար փոխադարձաբար փոխարինելի են: Այս երկու կատեգորիաների փոխհետադարձությամբ է որոշվում «ժամանակ-հավերժություն» հասկացության փիլիսոփայությունը.

**Դեմքով շրջվում ես անցյալին,
բայց երբ քո տեսածը
գրի ես առնում-
դու արդեն դրանով
կերտում ես ապագան,
այն, ինչ գրում ես անցյալին նայելով-
դա ինքը ապագան է,
կենտրոնում դու ես-
երկու հավերժությունների
միջև:**

(«Դեմքով շրջվում ես անցյալին»)⁴¹

«Անցյալի հիշողությունը, ներկայի իմաստավորումը և ապագայի ուրվագծումը հնարավոր են դառնում միայն այն պատճառով, որ մարդը օժտված է անցյալը հետոյից, մինչևը՝ հաջորդից, անցողիկը՝ հավերժից տարբերելու ունակությամբ»⁴²: Ուստի «երկու հավերժությունների» կենտրոնում կանգնած բանաստեղծի որոնող հայացքը, որն ուղղված է դեպի հետ, դեպի հեռավոր անցյալ, փորձում է գտնել այն ամենի սկզբնապատճառները, ինչը տեղի է ունենում ներկայում: Նա ներկան դիտում է անցյալի պրիզմայով: Անցյալը և ներկան սերտորեն փոխկապակցված են. ներկան ոչ այլ ինչ է, քան մաքրագտված անցյալ.

**....ես դեպի վերջն եմ քայլում, բայց իմ ստվերն ընկած է
սկզբի վրա....**

(«Վա՞ղը թե երեկը»)⁴³

«Ներկայի և անցյալի տարբերությունն այն է,- գրում է Թովմաս Էլիոթը,- որ գիտակից ներկան ինչ-որ տեղ անցյալի իրազեկությունն է այն չափով, որչափ որ անցյալի իրազեկությունն ինքը չի կարող դրսևորվել»⁴⁴: Ապագան, ըստ Թ. Էլիոթի, անցնում է անցյալի միջով ու «մատնանշում մի կետ, որը միշտ ներկա է», այլ կերպ ասած՝ ժամանակի տարասեռ շերտերը

41 Էդյան Հ., Լույսը ձախ կողմից, Եր., «Զանգակ» հրատ., 2018, էջ 135:

42 Հարությունյան Է. Ա., Մարդկային կեցության այլակերպումները, Եր., ԵՊՀ հրատ., 2018, էջ 88-89:

43 Էդյան Հ., Ընտրանի, էջ 653:

44 Էլիոթ Թ. Ս., Մեռյալ երկիրը, թարգմ.՝ Ս. Սկրտչյան, Հակոբ Մովսես, Եր., «Ապոլլոն» հրատ., 1991, էջ 108:

ծավալվում են մեկը մյուսի վրա, հոսում մեկը մյուսի միջով, ինչը նշանակում է հավիտենություն, անմահություն՝ «դարձ ի շրջանս իր»:

3. Կյանքի և մահվան արևելյան կրոնափիլիսոփայական ընկալումները բանաստեղծական տարածության սահմաններում

Էդոյանի բանաստեղծական «ես»-ը, «Դեմքով շրջվում ես անցյալին», «Վա՛ղը թե երեկը» և շատ այլ բանաստեղծություններում հերթական մարմնավորումից հետո մղվելով դեպի աստվածային գիտակցության բարձրակետը, պահպանում է անփոփոխ կապը գոյության անցյալի ձևերի հետ՝ յուրաքանչյուր անգամ գտնելով անցյալն այն տեսքով, ինչպես մտապահվել է անգիտակցականում, տարածաժամանակային այլ հարթության վրա: Այսպիսով՝ այլաշխարհային գոյության հավիտենականության խորհուրդը դառնում է էդոյանական ստեղծագործական մտայնության կենտրոնաձիգ առանցքը: Մատերիական օբյեկտների և երևույթների՝ ժամանակի և տարածության «կորդինացումն» է, որ հոսող ժամանակին հաղորդում է առարկայական բնույթ, և «Որքան անվերջ է ժամանակը, այնքան անվերջ է տարածությունը, որքան սահմանափակ է տարածությունը, այնքան սահմանափակվում է ժամանակը»⁴⁵:

Անորսալի ժամանակի տեսանելի պատկեր ստեղծելու, նրա գոյությունը տեղայնացնելու և անմահության գաղափարն առավել համոզիչ դարձնելու համար գրողը ներթափանցում է սեփական հոգու խորքերն ու այնտեղ տեսնում այն, ինչ փնտրում է.

**Այստեղ տեսնում եմ քեզ, քանի որ իմ մեջ ես դու,
քո քայլերն իմ մեջ են՝ քո մեջ են իմ քայլերը,
երկուսով այնտեղ ենք մենք, որը մեզ չի պատկանում,
ինչ սառը տերևաթափ քարե քաղաքի:**

**Հսկա տների մեջ մենք մնացել ենք:
Իմ անցյալը քո մեջ է, քո ներկան՝ իմ մեջ:
Իմ ձեռքերը մերկ են, իմ ոտքերը նույնպես:
Իմ ժամերն ապրում են աշխարհում քո նախկին:**

(«Անդրադարձումներ»)⁴⁶

45 Էդոյան Հ., Շարժում դեպի հավասարակշռություն, էջ 133-134:

46 Էդոյան Հ., Ընտրանի, էջ 75:

Մեր առջև բանաստեղծի խորզգա մտքի անդրադարձումներն են, ենթագիտակցության, բանականության խաղը, խոսքի արտաքին ձևերի պարզության անսահմանափակությունը, բանաստեղծական իմաստի հետևում թաքնված փիլիսոփայական խոհը: «Անդրադարձումները» իր բանաստեղծական մտքի և հույզի թարմությամբ մեր առջև բացում է պատկերների իրարամերժ հաջորդականություն, ներկայացնում է տրանսցենդենտալ աշխարհ՝ ոչ ստատիկ, անհաղորդ-աննյութական իրերով, որը մտապահված է հիշողության մեջ և ամփոփված է մտքում⁴⁷, սակայն հակադարձում է նրան, բայց և այնպես, արտահայտում գիտակցության և կյանքի անքակտելիությունը: Լիրիկական «ես»-ը հանդես է գալիս սինկրետիկ՝ միահյուսված ձևով՝ ներպարունակելով հիերարխիկ ճանապարհ անցած, տարաբնույթ հարթություններում վերապրած սեփական «բազմադեմ» գիտակցությունը:

Այսօրինակ տրամադրություն և խոր բովանդակություն ունի նաև Վ. Տերյանի «Երկու ուրվական» բանաստեղծությունը: Երկու բանաստեղծություններն էլ հավերժության խորհրդից ածանցված պատառիկներ են, որտեղից իսպառ դուրս է մղված անէություն մահը, որտեղ քնարական «ես»-ը, գտնվելով հավերժական շրջապտույտի («սանսարայի»⁴⁸) մեջ, հաղթահարում է մարմնական սահմանափակ գիտակցությունը, հասնում տարածաժամանակային այլ իրականություն և միաձուլվում սեփական բարձրագույն «ես»-ին («ատմանին»⁴⁹): Երկու բանաստեղծություններում էլ քնարական «ես»-ը, ամփոփված լինելով եթերային միջավայրում, բանաստեղծական անբացատրելի հյուսվածք է մարմնավորում:

**Ես եմ, դու ես, ես ու դու
Գիշերում այս դյութական,
Մենք մենակ ենք,- ես ու դու.
Ես էլ դու եմ ես չըկամ...**

**Չըկան օրերն ահարկու,
Չըկա ժամ ու ժամանակ,
Ուրվական ենք մենք երկու
Միշտ իրար հետ, միշտ մենակ...**

(«Երկու ուրվական»)⁵⁰

47 Այս մասին տես **Ջաքարյան Հ.**, Կենսագրական և վերապրումի հիշողության հարաբերակցության խնդիրները (Հ. Էդոյանի պոեզիայի օրինակով), «Բանբեր Երևանի համալսարանի. Փիլիսոփայություն և հոգեբանություն», Եր., 2019, N 2 (29), էջ 69-80:

48 Նույն տեղում, էջ 222-223:

49 Буддизм: Словарь (Абаева Л. Л., Андросов В. П., Бакаева Э. П. и др.), с. 40.

50 **Տերյան Վ.**, Բանաստեղծություններ (Ղար. բարձր տարիքի համար), Եր., «Սովետ. գրող» հրատ., 1980, էջ 49:

Ե՛վ Հ. Էդոյանի, և՛ Վ. Տերյանի բանաստեղծություններում առկա է մետաֆիզիկական–փիլիսոփայական սկիզբ: Սակայն **Վ. Տերյանի բանաստեղծությանը հատուկ են սիմվոլիստական պոեզիային բնորոշ միայնությունը, թախիծը, նրբությունը:** Վ. Տերյանը նկատում է ամենուր միմիայն տխրաբույր ստվերներ, իսկ **Հ. Էդոյանն այս պարագայում բավականաչափ հեռու է սիմվոլիստական դպրոցի հետևորդներից,** չնայած ակունքներում «առնչություն ունի սիմվոլիստների գրապատմական անցման շրջանի հետ»⁵¹: Նա սեփական գեղագիտական կոնցեպցիաների դիտանկյունից է ընկալում իրականությունը՝ համադրելով համաշխարհային կրոնափիլիսոփայական հոգեբանության առանձնահատկությունների ուսումնասիրությունների խոր իմացությունն ու զգայական, գեղարվեստական մտածողությունը, ինչի շնորհիվ պոետական խոհը հոսում է ինքնատիպ ընթացքով՝ բացելով բանաստեղծական նոր տարածություն: Այս իմաստով Հ. Էդոյանի բանաստեղծությունը կարելի է համարել **մետաֆիզիկական–փիլիսոփայական–ինտելեկտուալ,** քանի որ միայն ինտելեկտի և փիլիսոփայական ընդհանրացման միջոցով է առաջին հայացքից անբացատրելին ճանաչելի դառնում:

Լիրիկական «ես»-ը անվերապահորեն կապված է մշտագո լինելիության՝ հոգու աննահության գաղափարի ձևարտությունը⁵² («Թե չկա հարություն՝ ուրեմն չկա ոչինչ...»⁵³), որում անփոփոխ կմնան սեփական «ես»-ի՝ հոգի-գիտակցության ինքնությունն ու հիշողություններն անցյալի մասին.

**Այս վայրն անծանոթ է: Այսքան բազմություն,
այսքան դեմքեր: Փնտրում ենք իրար, բայց չենք
գտնում: Որտե՞ղ են մեր ընտրած խորհրդանիշները,
որոնցով պետք է ճանաչեինք միմյանց: Մենք
փորձում ենք բարձրաձայն մեր անուններն ասել, բայց
ոչ մի արձագանք: Այդպիսի անուններով մարդիկ
այստեղ չկան: Չորս կողմը լռություն է:
(«Երգչախմբի լռությունը»)⁵⁴**

51 «Հ. Էդոյանի պոեզիան ոչ թե արտաքին՝ տեքստային կառուցվածքի ոլորտում է յուրացնում սիմվոլիզմի պոետիկան, այլ՝ բանաստեղծության ստրուկտուրայի համակարգում, որ հակադրության իմաստով նախորդ դարի 50-60-ականների պլաստիկ պոեզիայի, նրա պոետիկայի մերժումն է: Հ. Էդոյանի պոեզիան այս ճանապարհով, անշուշտ, նախընտրում է ներքին բարդացումների, մետաֆորային պատկերավորման ուղին, բառերն արտահայտում ներքին սեմանտիկական հարաբերություններում, աշխարհը դիտելով մի քանի պլաններով՝ փոխակերպելով նախորդ դարի ավանդական ըմբռնումները» (**Աբրահամյան Ս.**, Հենրիկ Էդոյան. «Սոսքն իմ հեռարանն է» և «...Այդ անշարժ վայրկյանն են ես», «Գրականագիտական հանդես», Եր., «Արմավ» հրատ., 2017, ժէ, էջ 113-114):

52 Չպետք է շփոթել վերամարմնավորման (ռեինկարնացիայի) գաղափարը հարության գաղափարի հետ: Վերամարմնավորումը ենթադրում է հոգու՝ մարմնից բաժանվելն ու ժամանակային այլ իրականության մեջ, այլ մարմնում վերածնվելը, իսկ հարությունը վերաբերում է քրիստոնեական կրոնական այն տեսակետին, որ երբևէ մարդը նորից կվենդանանա, հարություն կառնի նույն մարմնում, ինչպես խաչելությունից հետո Քրիստոսն է հարություն անել, կլինի նույն անհատականությունը, ինչ կար այն ժամանակ, երբ ապրում էր: Հարության մասին տես **Լևոն Եսայանի** **Վերջական**, Ընդհանրական հարություն. հարուցյալ մարմիններ (աստվածաբանական էություն), «Էջմիածին», Եր., 2012, ԿԸ (Ե), էջ 12-18:

53 Տես **Էդոյան Հ.**, Ընտրանի, էջ 728:

54 Նույն տեղում, էջ 431:

«Երգչախմբի լուծությունը» պոեմում բանաստեղծն ականա անդրադառնում է բուդդայականությանը: Պոեմը բացահայտում է բուդդիզմի փիլիսոփայությունը⁵⁵ շարունակական մարմնավորման և վերամարմնավորված նախկին «ես»-ի փնտրտուքների գաղափարը, որը Հ. Էդոյանին ինքնուտինքյան բերեց կրոնական-փիլիսոփայական այն ուսմունքի հոգեբանական իմաստի բացահայտմանը, որի հիմքում վերամարմնավորումը մարդկային «ես»-ի զարգացման և կատարելագործման միջոցն է, որտեղ «ես»-ը բազմաթիվ մարմնավորումներով ձգտում է դեպի կատարելություն՝ դեպի նիրվանա⁵⁶: Հ. Էդոյանը և նրա բանաստեղծական վերագանցական կերպարները, որոնք «փնտրում են, բայց չեն գտնում իրար իրենց ընտրած խորհրդանիշներով, որոնցով պետք է ճանաչեին միմյանց», **ձևավորեցին ծայրաստիճան բարդ մտահայեցակարգ՝** բանաստեղծական խոսքի պատկերավորման ու արտահայտման բացառիկ մոտեցում համաշխարհային կրոնական դավանանքների և սրբազան տեքստերի վերաբերյալ:

Ուշագրավ է, որ այս պարագայում որոշակի հարազատություն է նկատվում նաև Հ. Էդոյանի և 1930-ական թվականների Ե. Չարենցի աշխարհների միջև: Նշված բանաստեղծությունները վկայում են երկու բանաստեղծների կողմնորոշումը դեպի արևելյան կրոնափիլիսոփայության սկունքը:

Դու մի օր աչքերդ կփակես, որ ուրիշը քո տեղը գոյանա.

Կգնաս, կանցնես աշխարհքից, որ ուրիշը քո տեղը գոյանա:

–Այն դու ես. իմաստուն, այն դու, բայց արդեն դարձած ուրիշ.

Հաստատեց, ժխտելով նա քեզ, որ ուրիշը քո տեղը գոյանա⁵⁷:

Ակնհայտ է, որ երկու բանաստեղծություններն էլ ունեն ներքին միասնություն, զգացմունքների ընդհանուր մթնոլորտ, և երկուսի կենտրոնն ու հիմքը վերամարմնավորման գաղափարն է, այնուամենայնիվ, դրանցից յուրաքանչյուրն ունի խոհական, բովանդակային, ոճական իր անհատական առանցքը: Կենսափիլիսոփայական խորքով ու երևույթների էության մեջ թափանցելու ձիրքով տարբեր բանաստեղծները՝ Հ. Էդոյանն ու Ե. Չարենցը, չնայած տրամադրությունների ներքին խտացումների նմանություններին, ռիթմային-ինտոնացիոն ու թեմատիկ-պատկերային մակարդակներում տարբեր կերպ են բանաստեղծական տեքստում պատկերում-ոճավորում կյանքի անսպառության՝ հոգու անմահության խորհուրդը: Էդոյանական բանաստեղծությունը պատկերների միասնաձայն դիտնանսով («Ապրել՝ չհասկանալով, չապրել՝ // հաս-

55 Բուդդիզմի փիլիսոփայության մասին տես **Ջաքարյան Ս. Ա.**, Փիլիսոփայության պատմություն, Եր., «Նաիրի» հրատ., 2000, էջ 21-22:

56 Стен Буддизм: Словарь (Абаева Л. Л., Андросов В. П., Бакаева Э. П. и др.), էջ 192:

57 **Չարենց Ե.**, Երկերի ժողովածու երեք հատորից, հատոր երրորդ, Եր., Հայկական ՍՍՌ ԳԱ հրատ., Մ. Աբեդյանի անվան գրականության ինստիտուտ, 1964, էջ 211:

կանալով») ձեռք է բերում ներքին մեղեդայնություն, ձգտում բազմաձայնության (պոլիֆոնիա), միասնության՝ հարմոնիկ երաժշտության, որի մեջ «վերջավորը կամ զանազանությունը դրսևորվում է լոկ որպես անվերջություն կամ միասնության այլաբանություն»⁵⁸։ Իսկ **Չարենցի բանաստեղծության ինտոնացիոն բնույթը սիմվոլիստական պոեզիային հատուկ մեղեդայնությամբ ու մտապատկերներով է երանգավորված**։

Կերպարանափոխված (վերամարմնավորված) հոգու հավերժական գոյատույտի գաղափարը, որին Հ. Էդոյանը հետևում է որպես սուբյեկտիվ բանաստեղծական հավատամքի, առաջացել է մարդկության հոգեկան զարգացման ու քաղաքակրթության նախնական աստիճաններում։ Հոգիների կերպարանափոխման գաղափարը դարեր շարունակ էվոլյուցիոն սանդղակով առաջընթաց է ապրել, ժամանակի ընթացքում որոշակիորեն փոխակերպվել, վերաիմաստավորվել, վերակերպվել ինչպես անտիկ պոեզիայում, այնպես էլ փիլիսոփայության մեջ, մասնավորապես՝ Պլատոնի⁵⁹ տեսության մեջ, արևելյան կրոնական մշակույթում՝ բրահմայականության, բուդդայականության, հինդուիզմի մեջ, թափանցել վաղմիջնադարյան նեոպլատոնիկների, կոնկրետ՝ Օրիգենեսի⁶⁰ փիլիսոփայություն։ Սակայն եվրոպական գրականության, առավել ևս հայ գրականության մեջ Հ. Էդոյանն այն քչերից է, որոնք ստեղծել են սեփական բանաստեղծական աշխարհի մոդելը՝ բանաստեղծափիլիսոփայական մտքի ենթաշերտերում ծավալելով կերպարանափոխման գաղափարը, բայց նրան չտալով փիլիսոփայական որոշակի ձևակերպում։

Ստեղծագործական համատեքստի հիմքում հաստատված կրոնափիլիսոփայական այն համոզմունքը, որ մահը միայն գոյության այլակերպություն է (ոչ հունական մետամորֆոզի իմաստով), այլ ոչ թե կյանքի ավարտ, իսկ մարմինն ընդամենը մարդկային հոգու ժամանակավոր «բնակարան» է, որն Աստծո կամոք մշտապես ենթարկվում է փոփոխության, բանաստեղծին բերում է լիակատար վստահություն, որ «Աշխարհում ամեն ինչ միևնույն նյութի տարբեր արտահայտություններն են»⁶¹, որոնք անփոփոխում են համաշխարհային Հոգու։ Սակայն այսպիսի դրական և լավատեսական դինամիկա «կրող» վերամարմնավորման գաղափարի նկարագրից զատ՝ կյանքը, այնուամենայնիվ, աններդաշնակ իրականություն է, որն ամբող-

58 Ֆ. Շելլինգից մեջբերումն ըստ՝ **Ղանիել Երաժիշտ**, Մոնոդիա, Պոլիֆոնիա և հոգևոր երաժշտությունը, «Էջմիածին»։ Պաշտոնական ամսագիր Ամենայն Հայոց Կաթողիկոսության Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի, 2006, ԿԲ (Ա), էջ 120։

59 «Քանի որ մեր հոգին գոյություն ուներ ավելի վաղ, ...այն, անշուշտ, պետք է գոյություն ունենա նաև մահից հետո. չէ՞ որ նա պետք է նորից ծնվի» (Платон, Собрание сочинений в 4 т., т. 2, Общ. ред. А. Ф. Лосева, В. Ф. Асмуса, А. А. Тахо-Годи, Примеч. А. Ф. Лосева и А. А. Тахо-Годи, М., Изд. «Мысль», 1993, с. 32)։

60 Ըստ Օրիգենեսի բանական էակները ստեղծվել են ավելի վաղ, քան մարմինները։ Ոգին, որն իր բնույթով անմարմին ու անտեսանելի է, «մարմնեղենաձևավորվ» կարող է նաև բաժանվել այդ մարմնից և փոխարինել այն այլ մարմնով (տես **Петров В. В.**, Элементы Аристотелевской доктрины о росте и развитии у Оригена, Мефодия Олимпийского и Григория Нисского, Философское антиковедение и классическая традиция, Том 10. Выпуск 1 (сборник), 2016, էջ 133-134)։

61 **Կոնյոյ Պ.**, Ալքիմիկոսը, Եր., «Կան Արյան» հրատ., 2004, էջ 81-82։

ջական է դառնում միայն բաժանման միջոցով՝ տեսանելիից այն կողմ գտնվող այլակողմյան աշխարհում.

**Իմ ամեն քայլի մեջ ինձանից մնում է մի մարմին:
Թողնում եմ նրան և առանց հրաժեշտի գնում եմ առաջ:
Գնում եմ, բազմապատկվում, իսկ իմ ետևից գալիս է
մի ամբոխ: Նա ունի մի հոգի,
բայց տարբեր մարմիններ:
....Տեսնո՞ւմ ես, իսկ դու ինձ մենակ ես համարում:
(«Մեկ և բազմաթիվ»)⁶²**

Այս բանաստեղծության մեջ մահվան և կյանքի իմացաբանությունը բացահայտվում է աշխարհի մասին ունեցած անհատական-հեղինակային ընկալման շարժման ու զարգացման միջոցով: Այն բազմապատկվող ու բազմաձև փոխակերպումների շարունակական գոյաշարժ է, որը ներառում է աշխարհի արարման գարկերակում հոսող՝ մարդու բնականոն կյանքի ընթացքը, որի մեջ պարփակված է աշխարհի աստվածային առեղծվածը:

Արևելյան փիլիսոփայության կնիքը կրող վերոբերյալ բանաստեղծությունը՝ հյուսված այլաշխարհային հոգևոր-միստիկ պատկեր-տեսիլներով, բովանդակային առումով հուշում է գաղափարական նույն էությունը, որին պարզորոշ կերպով անդրադարձել է Հովհ. Թումանյանը իր քառյակներից մեկում.

**Հազար տարով, հազար դարով առաջ թե ետ, ինչ կա որ.
Ես եղել եմ, կամ, կլինեմ հար ու հավետ, ինչ կա որ,
Հազար էսպես ձևեր փոխեմ, ձևը խաղ է անցավոր,
Ես միշտ հոգի, տիեզերքի մեծ հոգու հետ, ինչ կա որ⁶³:**

Երկու հեղինակների բանաստեղծություններում ինքնատիպ գույներով մարմին է առած ենթագիտակցության բազմաձև շերտերում թաքնված հոգու անմահության հավերժական զգացողությունը, որը պարտադրում է մարդկային բազմահեղ արատներից մաքրագործվելու կամք ու վճռականություն՝ մոտենալու «տիեզերքի մեծ հոգուն», կյանքի մշտաբորբ առեղծվածների բացահայտմանը:

Ավելին, առաջնորդվելով «Մարդը փոքր տիեզերք է» մտայնությամբ, Հ. Էդոյանը շարունակում է **Հովհան Որոտնեցու ավանդները**՝ ակունքներում առնչվելով **արևելյան կրոնափիլիսոփայությանը**: Հովհան Որոտնեցին, Աստծո և նյութի համագոյության, աստվածային նախախնամության մերժման

62 Էդոյան Հ., Ոնտրանի, էջ 669:
63 Թումանյան Հովհ., Երկերի ժողովածու չորս հատորով, հատոր երկրորդ, Եր., «Հայաստան» հրատ., 1968, էջ 271:

վերաբերյալ Արիստոտելի⁶⁴ գաղափարները համարելով մոլորություն⁶⁵, «ելնում է քրիստոնեական մարդաբանության այն հիմնադրույթից, որ մարդը երկու անկախ գոյերի՝ հոգու և մարմնի միասնություն է: Մարդը հոգու և մարմնի, իմանալիի ու զգալիի միասնություն է. հոգով նա կապված է իմանալի-աննյութական, իսկ մարմնով՝ զգալի-նյութական աշխարհի հետ: Մարդն ունի բաղադրյալ, բայց միասնական բնություն. առանց մարմնի կամ առանց հոգու չի կարող լինել մարդ»⁶⁶, «...զի ասէ Գիրն՝ «Արար Աստուած զմարդն ի պատկեր իւր» [Ծնն. Ա. 27], և կոչի մարդ ի հոգւոյ իմանալոյ եւ ի մարմնոյ զգալոյ, եւ ոչ հոգի առանց մարմնոյ կոչի մարդ, եւ ոչ մարմինն առանց հոգւոյ, այլ յերկուցն միաւորութենէ ասի մարդ: Եւ նոքա պատճառ լինելիութեան մարդոյն ասեն զմեղքն. յայտ լինի, թէ պատկերն Աստծոյ մեղօք գոյանայ, որ է անտեղի մեծ հերձուած»⁶⁷: Այսպիսով՝ կարելի է ասել, որ Հ. Էդոյանի պոետական աշխարհում մարդն արարված է ոչ միայն Աստծո պատկերով ու նմանողությամբ, այլև էությանը: **Փշրված հայելու բեկորների միջոցով արտացոլված մարդն այստեղ տեսնում է իր ամբողջական արտացոլանքը՝ իր ողջ տարողությամբ ու բազմաբովանդակությամբ, սեփական կատարյալ պատկերով ու էությամբ:**

Եզրակացություններ

Կյանքի և մահվան մասին պատկերացումները մարդկության հոգևոր ու գիտակցական մակարդակի, ազգային մտահայեցողության մասին պատկերացումների առհավատյան են, հետևաբար «մահվան» գաղափարի գեղարվեստական իմաստավորումը գրականության պատմության ամենաառանցքային թեմաներից մեկն է: Պատմական-մշակութային ամեն մի դարաշրջանում կյանքի ու մահվան թեման տարբեր երանգներով է պատկերվում: Մահվան ֆենոմենի ընկալումները պայմանավորված են կրոնական ու էթնոմշակութային առանձնահատկություններով և ստեղծագործողի ոգու շարժման ուղղվածությամբ, բայց համապատասխան այն բանին, որ մարդը զարգանում, հոգեպես հարստանում է՝ նպաստելով սոցիալական միջավայրի կայացմանն ու զարգացմանը, գիտական նոր բացահայտումներին զուգընթաց, և շատ հաճախ անձնային գիտակցությունը զարգանում է մինչև վերանձնային գիտակցություն (Հ. Էդոյանի լիրիկական «ես»-ը այդ վեր-

64 Ըստ Արիստոտելի՝ «Միտքը գոյություն ունի առանձին և ենթակա չէ ոչնչի. այն ոչնչի հետ խառնված չէ... Միտքն այնպիսին չէ, որ երբեմն մտածում է, երբեմն ոչ: Միայն առանձնակի գոյությամբ է նա այն, ինչ որ կա, և միայն նա է անմահ ու հավերժ» (Аристотель, О душе, Аристотель, Собр. соч.: в 4 т., т. 1, М., Изд. «Мысль», 1976, с. 435-436):

65 Առավել մանրամասն տեսն **Զաքարյան Ս.**, Հոգու մասին Արիստոտելի ուսմունքի Հովհան Որոտնեցու մեկնաբանությունը, «Բանբեր Երևանի համալսարանի. Հայագիտություն», Եր., 2016, N 3 (21) էջ 5:

66 **Զաքարյան Ս.**, Հովհան Որոտնեցու մարդաբանական եւ բարոյագիտական հայացքները, «Էջմիածին». Պաշտոնական ամսագիր Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածին, 2016, ՀԳ (ԺԱ), էջ 28:

67 **Ս. Հովհան Որոտնեցի**, Մեկնողական-իմաստասիրական ձառեր, քնն. բնագրերը, առաջ. և ծանոթ. Ա. Մինայանի, Ս. Էջմիածին, 2009, էջ 95:

գիտակցության կրողն է՝ կանգնած ընթերցողի՝ իրական աշխարհի և տրանսցենդենտալ իրականության միջակայքում), շատերի համար «Աստված», «կյանք» և «մահ» հասկացությունները դառնում են **առավել ընդհանրական**, այսինքն՝ ավելի ընդլայն, քան ընդունված է տարբեր կրոնական դոգմաներում կամ կոնցեպցիաներում: Եթե ինչպես ցույց է տալիս գրականության պատմությունը⁶⁸, մահը մարդկային կյանքի ամենաողբերգական իրողությունն է՝ պայմանավորված առաջին հերթին նրանով, որ մարդը վախենում է անհայտությունից և դժվարությամբ է ընդունում-հասկանում, որ ինքը, համաձայն իր կենսաբանական բնույթի, մահկանացու է, և որ սեփական կենսաբանական գոյությունը, ինչին այդքան կապված է, մի օր կդադարի գոյություն ունենալուց, ապա **Հ. Էդոյանի բանաստեղծական աշխարհում կյանքի և մահվան սահմանները ջնջված են**. այստեղ ձևավորվում է այն գաղափարը, որ մարդը, անկախ իր գոյաբանական (օնտոլոգիական) կարգավիճակից, անմահ է, իսկ մահն ընդամենը գիտակցության անցումն է դեպի այլ մակարդակ՝ նյութական տիեզերքի սահմաններից դուրս, դեպի հոգու և գիտակցության ոգեղեն ոլորտ՝ հերթական ֆիզիկական աշխարհում, հերթական մարմնավորումից հետո: Եվ պայմանավորված էմպիրիկ մակարդակում սեփական որակական վերելքներով՝ նրան տրված է հասնել առավել բարձր մակարդակի, ինչը սկզբունքորեն ենթադրում է **մարդկային գործունեության հնարավորությունների սահմանների ընդլայնում**⁶⁹: Կարելի է ասել, որ հենց դա էլ Հ. Էդոյանի բանաստեղծության գլխավոր փիլիսոփայական հայտնագործություններից ու նրա գլխավոր ներդրումներից մեկն է մարդկային էության-գիտակցության խնդիրների փիլիսոփայական իմաստավորման մեջ:

Հոփսիմե Ա. Զաքարյան – գիտական հետաքրքրությունների բնագավառները՝ նորագույն շրջանի հայ գրականություն, գրականության տեսություն: Հեղինակ է 5 գիտական հոդվածի և 1 մենագրության:

Էլեկտրոնային հասցե՝ zaqaryan_hripsime@mail.ru

68 Որքան սերտ է լիրիկական «ես»-ի ու ստեղծագործողի կենսագրական «ես»-ի կապը, և բանաստեղծության համատեքստում ընկալելի է անձնական-կենսագրական ենթատեքստ, այնքան ավելի ողբերգականորեն է ընկալվում մահվան գաղափարը, և ընդհակառակը՝ որքան բանաստեղծական «ես»-ը դուրս է գալիս անձնային գիտակցության սահմաններից և շարժվում դեպի վերանձնային գիտակցություն ինտուիտիվ ներքին դրդմամբ, մասն ամբողջի մեջ ներըմբռնելով, մահվան գաղափարն այլ դիտանկյունից է ընկալվում: Մահը ոչ թե ողբերգական իրականություն է, այլ հոգու հայտնություն: Այստեղից կարելի է եզրակացնել, որ մահվան գաղափարն ընկալվում է ոչ թե համապատասխան այն կրոնական ավանդույթին, որը դավանում է ստեղծագործողը, այլ ըստ մահվան գաղափարի անձնական-հեղինակային ընկալումների, այլ կերպ ասած՝ մահվան գաղափարը կրոնական գիտակցության մեջ ընդունում է տարբեր ձևեր: Հ. Էդոյանի լիրիկական «ես»-ին բնորոշ որոշ առանձնահատկությունների մասին տես **Զաքարյան Հ.**, Հեղինակային «ես»-ին բնորոշ դերանվանական ձևերը Հենրիկ Էդոյանի պոեզիայում, «Հայագիտական հանդես - ՀՊԱՀ», Եր., 2019, N 2 (44), էջ 155-124:

69 «Ֆեդոն» երկխոսության մեջ Պլատոնը գրում է. «Եթե մահը լիներ ամեն ինչի վերջը, այն կլիներ վատ մարդկանց համար գլխավոր ձեռքբերում. մեռնելով նրանք միանգամից կազատվեին և մարմնից, և դրա հետ միասին հոգուց, սեփական սխալականությունից: Բայց իրականում, քանի որ պարզվեց, որ հոգին անմահ է, ըստ երևույթին, նրա համար չկա այլ ապաստան և փրկություն փորձանքից, բացի մեկից՝ դառնալ հնարավորինս լավը և հնարավորինս խելամիտ» (Պլատոն, Федр, Платон, Собр. соч., в 4 т., т. 2, с. 69):

Summary

THE COGNITIVE PROBLEMS OF LIFE AND DEATH IN HENRIK EDOYAN'S POETRY

On the occasion of the 80th birth anniversary of the philosopher-poet

Hripsime A. Zakaryan

Key words - Philosophy of Buddhism, Theory of Reincarnation, Philosophy of Religion, Otherworld, Immortality, verse, life, death, culture, literature, consciousness, chaos, space, lyric "I".

The theme of life and death has been and remains one of the main literature themes. It is an undeniable truth that life and death problem, in all its multiplicity of themes, is connected with Armenian poetry as an inner worldview. It has developed regularly and logically, in the light of philosophical conceptions of the authors of this or that period, mainly in two directions: first, death was traditionally perceived as some absolutely natural necessity, at the same time including in itself tragic mood nuances. Second, moral-philosophical, when death is viewed and perceived as the end of earthly sufferings and transition to another life. The philosophical manifestation of this problem is mostly expressed in works of poet-symbolists.

In contemporary Armenian poetry, the theme of this orientation remains relevant and necessary. Emphasized, fully and universally, the life and death theme was sought to be more concretely and vividly transformed in Edoyan's lyrical works. By redefining the traditional ways, the poet expands and enriches philosophical reflections on life, death, and immortality. This becomes more obvious and expressive as a result of comparing it with works of different authors of different historical periods (Yeghishe Charents, Vahan Terian and others).

The synthesis of Christian and Eastern religious-philosophical perceptions in the worldview of lyrical "I" is the main component of H. Edoyan's entire creative art.

Thus, the relevance of this article is conditioned by the need for a special analytical work dedicated to the problem of life and death in Edoyan's poetry, to his philosophical reflections on death, human life and soul immortality.

The article attempts to identify from the standpoint of traditional religious-cultural beliefs the essence, the content originality of the poems written on the issues of life and death that one often meets in the poetry of the prominent Armenian poet Henrik Edoyan. The eternal theme of life and death is often met in

Armenian and world poetry in various wordings. However, unlike other poets, Henrik Edoyan, by re-discovering the eternal essence of world religions, confirms non-existence of death and the eternal life that in the poetic text is perceived as a realized truth, conveying a new meaning and a new artistic coloring to the poem.

The poet's philosophical reflections on the meaning of life, death and immortality are reinterpreted in poems such as "Chaos is us, me and you", "Here and there", "Light and heavy", "One and numerous", etc.

The purpose of this article is the psychological-philosophical analysis of life-death correlation problems, which allows to rethink the peculiarities of H. Edoyan's poetic world perception.

Резюме

ГНОСЕОЛОГИЧЕСКИЕ ПРОБЛЕМЫ ЖИЗНИ И СМЕРТИ В ПОЭЗИИ ГЕНРИХА ЭДОЯНА

К 80-летию со дня рождения поэта-философа

Рипсима А. Закарян

Ключевые слова - философия буддизма, теория реинкарнации, религиозная философия, иномир, бессмертие, стих, жизнь, смерть, культура, литература, сознание, хаос, космос, лирическое «я».

Целью данной статьи является духовно-философский анализ проблемы соотношения жизни и смерти, позволяющий осмыслить своеобразии поэтического мировосприятия Генриха Эдояна. Философское размышления поэта о смысле жизни, о смерти и бессмертии переосмысляются в таких стихотворениях, как «Хаос-это мы, ты и я», «Здесь и там», «Легкий и тяжелый», «Один и бесчисленный» и др..

Тема жизни и смерти была и остаётся одной из центральных тем в литературе. То, что проблема жизни и смерти во всем многообразии этой темы, как мирозерцание внутренне связана с армянской поэзией- неопровержимая достоверность. Она закономерно и разумно в свете философских концепций авторов той или иной эпохи, развивалась в основном в двух направлениях: первое-смерть традиционно воспринималось как нечто абсолютно естественное, необходимое, но в то же время заключающее в себе нюансы трагического настроения. Второе- нравственно-философское, когда смерть рассматривалось и воспринималось как конец земных мучений и переход в

иную жизнь. Философское проявление этой проблемы выразилось, в большинстве случаев, в произведениях поэтов-символистов.

В современной армянской поэзии темы данного направления остаются актуальными и необходимыми. Тема жизни и смерти отчетливо, полноценно и обобщенно проявилась в стремлении к наиболее точному и яркому воссозданию в лирических произведениях Генриха Эдояна. Поэт, углубляя традиционные формы, расширяет и обогащает философские размышления о жизни, смерти и бессмертии. Сказонное становится более очевидным и выразительным в сравнении произведений разных писателей разных исторических эпох (Егише Чаренц, Ваан Терьян и др.).

Синтез христианского и восточного религиозно-философского мироощущения лирического «я» является основной компонирующей всего стихотворного творчества Генриха Эдояна.

Таким образом, необходимость специальной работы, посвященной анализу проблемы жизни и смерти в поэзии Генриха Эдояна, его философские размышления о сущности смерти, о смысле человеческой жизни и бессмертии души, определяет актуальность данной статьи.

В статье сделана попытка раскрыть суть и своеобразие содержания стихотворений, написанных по теме жизни и смерти, часто встречающихся в поэзии известного армянского поэта Генриха Эдояна с точки зрения мирового традиционного религиозно-культурного представления. Вечная тема жизни и смерти часто встречается в армянской и мировой лирике в разнородных формулировках. Однако, в отличие от других поэтов, Генрих Эдоян, вновь раскрывая вечную суть мировых религий, подтверждает вечную жизнь и не существование смерти, что в стихотворных текстах воспринимается как осознанная истина, придавая его стихотворению новое значение и новое художественное оформление.

REFERENCES

1. “Bol’shaja rossijskaja enciklopedija”, https://bigenc.ru/religious_studies/text/4181536 (In Russian).
2. “Haykakan sovetakan hanragitaran”, hat. 3, Yer., 1977 (In Armenian).
3. “Mify narodov mira”: Enciklopedija. Elektronnoje izdanije, Gl. red. S. A. Tokarev, M., 2008, izd. “Sovetskaja Enciklopedija” (In Russian).
4. **Abrahamyan S.**, Henrik Ėdoyan. “Khosk’n im henarann ē” yev “...Ayd ansharzh vayrkyann em yes”, “Grakanagitakan handes”, Yer., “Arnav” hrat., 2017, ZhĔ (In Armenian).
5. **Aristotel’**, O dushe, **Aristotel’**, Sobr. soch.: v 4 t., t. 1, M., “Mysl’”, 1976 (In Russian).
6. **Astuatsashunch’** (Hin yew Nor ktakaranats’) (Yebrayakan yev yunakan bnagimerēn t’argmanuats), Vienna, Amerikean Astuatsashunch’i ěnkerut’iwn, 1929 (In Armenian).
7. **Avetisyan Z.**, Gegharvestakan mtatsoghut’yan hetk’erov, Yer., “Sovetakan grogh” hrat., 1985 (In Armenian).

8. Buddizm: Slovar' (Abajeva L. L., Androssov V. P., Bakajeva E. P. I dr.), Pod obsh'. red. Zhukovskoj N. L. I dr., M., Izd. "Respublika", 1992 (In Russian).
9. Ėdoyan H., Sharzhum depi havasarakshrut'yun, Yer., "S. Khach'ents', P'rint'info", 2009 (In Armenian).
10. Ėdoyan H., Ėlegik mtorunner, Yer., "Van Aryan" hrat., 2019 (In Armenian).
11. Ėdoyan H., K'ristosi mifo-kerparē grakan mshakut'ayin zargats'man mej, "Garun", 2005, N 1 (In Armenian).
12. Ėdoyan H., Yeghishe Ch'arents'i poetikan (yerkrord hratarakut'yun), Yer., "Van Aryan" hrat., 2011 (In Armenian).
13. Ėdoyan H., Ėntrani, Yer., "Hayagitak" hrat., 2016 (In Armenian).
14. Ėdoyan H., Yerek' ōr arants' zhamanaki, Yer., "Van Aryan" hrat., 2005 (In Armenian).
15. Ėliot' T'. S., Meryal yerkirē, t'argm. S. Mkrтч'yan, Hakob Movses, Yer., "Apollon" hrat., 1991 (In Armenian).
16. Ėliot' T'. S., Ch'ors kvartet, Banasteghts., t'argm. S. Mkrтч'yan, Yer., Hegh. hrat., 2013 (In Armenian).
17. Florenskij P., Ikonostas, S.-P., izd. "MIFRAL' RUSSKAJA KNIGA", 1993 (In Russian).
18. Gesiod, Antologija mirovoj filosofii: v 4 t., t. 1: Filosofija drevnosti I srednevekov'ja, M., "Mysl'", 1969 (In Russian).
19. Harut'yun H., Gtsi khorhurdē Henrik Ėdoyani poeziayum, "Grakan t'ert'", Yer., 2017, N 20 (In Armenian).
20. Harut'yunyan Ė. A., Mardkayin kets'ut'yan aylakerpunnerē, Yer., YePH hrat., 2018 (In Armenian).
21. Il'in V. N., Esse o russkoj kul'ture, V. N. Il'in, SPb, "Akropol'", 1997 (In Russian).
22. Karel'skij A. V., O Ril'ke, Ril'ke R. M., Gedichte, M., "Progress", 1981 (In Russian).
23. Kirilenko G. G., Kratkij filosofskij slovar', M., "Izdatel'stvo AST", 2010 (In Russian).
24. Koran, Perevod I kommentarii M.-N. O. Osmanova, M., 1995 (In Russian).
25. Koelyo P., Alk'imikosē, Yer., "Van Aryan" hrat., 2004 (In Armenian).
26. Koz'jakova M. I., Gorod I noch'-xronotop konflikta, <https://cyberleninka.ru/article/n/gorod-i-noch-hronotop-konflikta-nachalo/pdf> (In Russian).
27. Krasil'nikov R. L., Tanatologicheskije motivy v uduzhestvennoj literature, Avtoreferat dissertacii na soiskaniye uchenoj stepeni doktora filologicheskix nauk, M., 2011 (In Russian).
28. Kuklev V., Noch', "Enciklopedija simvolov, znakov, emblem", Sost. V. Andrejeva I dr., M., "Lokid", 1999 (In Russian).
29. Leon-Portil'ja M., Filosofija Nagua, M., Izdatel'stvo Inostrannoj Literatury, 1961 (In Russian).
30. Levochskij S. S., Konceptualizacija simvola nochi v filosofskoj kul'ture nemeckogo romantizma. Dissertacija na soiskaniye uchenoj stepeni k. filos. nauk, M., 2017 (In Russian).
31. Levochskij S. S., Simvol nochi v nemeckom romantizme, Vestnik moskovskogo universiteta, Serija 7. Filosofija, 2016, N 2 (In Russian).
32. Levon sarkavag Yernjakyan, Ėndhanrakan harut'yun. haruts'yal marminner (astvatsabanakan ētyud), "Ėjmiatsin". Pashtōnakan amsagir Amenayn Hayots' Kat'oghikosut'ean Mayr At'royr Srboy Ėjmiatsni, 2012, KY (Ė) (In Armenian).
33. Losev A. F., Antichnaja Noch' I social'no-istoricheskije soznaniye drevnix, Acta Conventus XI «Eirene», Varszawa, 1971 (In Russian).
34. Musayelyan H., 1980-akan t't. hay banasteghtsut'yan tipabanut'yan khndimer, <http://artsakhwriters.com/archives/1053> (In Armenian).
35. Musayelyan H., Poeziayi nerk'in taratsut'yunē, Step'anakert, "Dizak plyus" hrat., 2010 (In Armenian).

36. **Petrosyan S. S.**, Mahvan yev kyank'i imasti himnakhndirë Davit' Anhaght'i p'ilisop'ayut'yan mej, "Banber Yerevani hamalsarani", Yer., 2000, N 3 **(In Armenian)**.
37. **Petrov V. V.**, Elementy Aristotelevskoj doktriny o roste I rastush'em u Origena, Mefodija Olimpijskogo I Grigorija Nisskogo, Filosofskoje antikovedenije I klassicheskaja tradiciya, Tom 10. Vypusk 1 (sbornik), 2016 **(In Russian)**.
38. **Platon**, Sob. soch.: V 4 t., t. 2, M., Izd. "Mysl'", 1993 **(In Russian)**.
39. **S. Hovhan Vorotnets'i**, Meknoghakan-imastasirakan çarëer, k'nn. bnagrere, araj. yev tsanot'. A. Minasyani, S. Eĵmiatsin, 2009 **(In Armenian)**.
40. **Shelling F.**, Filosofija iskusstva, M., Izd. "Mysl'", 1966 **(In Russian)**.
41. **Solov'jev V. S.**, Tri razgovora, **Solov'jev V. S.**, Sobranije sochinenij v 10 t., t. 10, SPb., 1897-1900 **(In Russian)**.
42. **T'umanyan Hovh.**, Yerkeri zhoghovatsu ch'ors hatorov, hator yerkrord, Yer., "Hayastan" hrat., 1968 **(In Armenian)**.
43. **Teryan V.**, Banasteghtsut'yunner (Dpr. bardzr tarik'i hamar), Yer., "Sovet. grogh", 1980 **(In Armenian)**.
44. **Tixomirova L. N.**, "Nochnaja" poezija v russkoj romanticheskoy tradicii: genezis, ontologija, poetika. Dissertacija na soiskanije uchenoj stepeni k. fil. nauk, Jekaterinburg, 2010 **(In Russian)**.
45. **Vorobej I. A.**, "Bog" I "Angel" v poezii R. M. Rilke, Pjatigorsk, PGUL, 2007 **(In Russian)**.
46. **Ch'arents' Ye.**, Yerkeri zhoghovatsu ch'ors hatorits', hator arajin. banasteghtsut'yunner yev poemner, Yer., "Sovet. grogh" hrat., 1986 **(In Armenian)**.
47. **Ch'arents' Ye.**, Yerkeri zhoghovatsu yerek' hatorits', hator yerrord, Yer., Haykakan SSR GA hrat., M. Abeghyani anvan grakanut'yan institut, 1964 **(In Armenian)**.
48. **Zak'aryan H.**, Heghinakayin "yes"-in bnorosh deranvanakan dzeverë Henrik Eđoyani poeziayum, "Hayagitakan handes-HPMH", Yer., 2019, N 2 (44) **(In Armenian)**.
49. **Zak'aryan H.**, Kensagrakan yev veraprumi hishoghut'yan haraberakts'ut'yan khndimerë (H. Eđoyani poeziayi òrinakov), "Banber Yerevani hamalsarani. P'ilisop'ayut'yun, hodgebanut'yun", Yer., 2019, N 2 (29) **(In Armenian)**.
50. **Zak'aryan S. A.**, P'ilisop'ayut'yan patmut'yun, Yer., "Nairi" hrat., 2000 **(In Armenian)**.
51. **Zak'aryan S.**, Hovhan Vorotnets'u mardabanakan yev baroyagitakan hayats'k'nerë, "Eĵmiatsin". Pashtönakan amsagir Amenayn Hayots' Kat'oghikosut'ean Mayr At'oroy Srboy Eĵmiatsni, HG (ZH A) **(In Armenian)**.
52. **Zak'aryan S.**, Hogu masin Aristoteli usmunk'i Hovhan Vorotnets'u meknabanut'yunë, "Banber Yerevani hamalsarani. Hayagitut'yun", Yer., 2016, N 3 (21) **(In Armenian)**.
53. **Zhirmunskij V. M.**, Nemeckij romantizm I sovremennaja mistika, SPb, Tip. T-va A. S. Suvorina "Novoje Vremja", 1914 **(In Russian)**.